«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՀ- 497
29.12.2021թ.

**ՀՀ Շիրակի մարզի**
**Գյումրի քաղաքային համայնքի**
**ղեկավար Վարդգես Սամսոնյանին,**
**ավագանու անդամներին**

**Հարգելի՛ պարոն Սամսոնյան,**
**Ավագանու հարգելի՛ անդամներ**

2021 թվականի ընթացքում «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը սոցիալական աջակցություն է ցուցաբերել Գյումրու համայնքի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 500 անձանց՝ արձագանքելով շահառուների բազմաբնույթ խնդիրներին եւ 2021թ. մարտահրավերներին: Համայնքում գործում է ցերեկային կենտրոն գործելով Գյումրու համայնքում՝ փորձել ենք մեղմել քովիդի հետևանքներն ու հնարավորինս աջակցել համայնքում ժամանակավոր բնակություն հաստատած արցախցի մեր հայրենակիցներին: Գյումրու համայնքում կազմակերպությունն ունի տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված ցերեկային կենտրոն, որին կից գործում է նաև բարեգործական ճաշարան: Կենտրոնի ծառայություններից օգտվում են տարեցները, 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձիք, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներ (մոտ 20 շահառու): 2022թ.-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ՝ «Առաքելություն Հայաստան»-ը կշարունակի ծառայություններ տրամադրել տարեցներին և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց, սակայն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կարիքավոր ընտանիքներին ծառայության տրամադրումը, որոնց համար կազմակերպությունը տարիներ շարունակ ֆինանսական միջոցներ է հայթայթել, ցավոք, 2022 թվականի հունվարից կդադարեցվի:

Իրականացվող համայնքային գործություններությունն ավելի արդյունավետ իրականացնելու համար՝ առաջարկում ենք համագործակցել՝ ընդլայներով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունները ի նպաստ համայնքում բնակվող տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների եւ այլ խոցելի խմբերի կյանքի որակի բարելավմանը:

Կից ներկայացված է համաֆինանսավորման մասին համաձայնագիրը:

***Հարգանքով՝***

***«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ***
***Նախագահ*** / / **Երվանդ Միխիթարյան**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ» ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Քարտուղարության բաժին
Մուտք 04 01 2022 թ.
Համար N 244

Հայաստան, Երեւան 0026, Նժդեհ 42, հեռ. 444-792, 444-793, 444-761, էլ.փոստ. org@ngo.mission.am, URL: www.mission.am
Nzhdeh 42, Yerevan 0026, Armenia, Tel: 444-792, 444-793, 444-761, E-mail: org@ngo.mission.am, URL: www.mission.am

# Համաձայնագիր

ք.Երեւան «29» դեկտեմբեր 2021թ.

**Գյումրի քաղաքային համայնքի եւ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության միջեւ համագործակցության մասին**

Գյումրի քաղաքային համայնքը՝ ի դեմս քաղաքային համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանի, եւ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը՝ ի դեմս նախագահ Երվանդ Մխիթարյանի, կնքեցին սույն Համաձայնագիրը հետեւյալի մասին.

## 1. Համաձայնագրի նպատակը

Համաձայնագրի նպատակն է նպաստել Գյումրու քաղաքային համայնքի սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների, ժամանակավոր բնակություն հաստատած արցախցիների եւ այլ անապահով խմբերի առաջնային սոցիալական խնդիրների լուծմանը՝ Գյումրու քաղաքային համայնքի աջակցությամբ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից սոցիալ-առողջապահական ծառայությունների մատուցման միջոցով:

Համաձայնագրի նպատակները իրագործելու համար Գյումրու քաղաքային համայնքը եւ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը պարտավորվում են կատարել Համաձայնագրի 2-րդ կետի դրույթները՝ յուրաքանչյուր կողմի ստանձնած պարտավորություններին համապատասխան:

## 2. Համաձայնագրի առարկան

Համաձայնագրով նախատեսվում է իրականացնել հետեւյալ սոցիալ-առողջապահական ծառայությունների կազմակերպումը եւ մատուցումը.

1. Սոցիալ-առողջապահական ծառայությունների մատուցում ցերեկային կենտրոնում (այսուհետ՝ ՑԿ) եւ տնային պայմաններում;
2. սննդի տրամադրում ՑԿ-ում;
3. տնային խնամք եւ կենցաղային սպասարկում;
4. տարեցներին տեղեկատվության եւ խորհրդատվության տրամադրում ՑԿ-ում եւ տնային պայմաններում;

4. Կողմերն ապահովում են Համաձայնագրով կատարված աշխատանքների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, անհրաժեշտ պայմաններ են ապահովում համատեղ մոնիթորինգ իրականացնելու համար:

## 6. Այլ պայմաններ

1. Համաձայնագրի մեկնաբանման, իրագործման կամ կիրառման ժամանակ ծագած տարաձայնությունները, ինչպես նաեւ սույն Համաձայնագրից բխող բոլոր այլ հարցերը լուծվում են երկկողմ բանակցությունների ճանապարհով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Քաղաքային համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու փոփոխությունը հիմք չէ Համաձայնագիրը լուծելու կամ ստանձնած պարտավորությունները չկատարելու համար:

3. Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Հասցե՝ Գ.Նժդեհ 42, հեռ.՝ 010 44 47 92
HSBC բանկ Հայաստան ՓԲԸ
h/h 001061738001 ՀՎՀՀ 02214646

| | |
|---|---|
| «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ | Գյումրի քաղաքային համայնքի ղեկավար |
| նախագահ Երվանդ Մխիթարյան | Վարդգես Սամսոնյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |